

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԾՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՆՈՐ՝ «ՎԱՐԱԺ» ԿԵՂԾԱՆՈՒՆԸ.— Այս կեղծանունը բացահայտելուն մեզ օգնում է Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» պարբերականի 1867 թ. սեպտեմբերի 30-ի համարում (№ 816) հրատարակված «Վաղարշի» (իմա՝ Պողոս Պառնասյան)¹ «Տրամախոսությունք» խորագրով հոդվածը։ Վերլուծելով 1860-ական թվականների գրական-մշակութային մի քանի հարցեր, բնութագրելով տարբեր վայրերում հրատարակվող հայալեզու պարբերականները, «Վաղարշը» հիշյալ «Տրամախոսությունք» մեջ «Առ պարոն Վարաժ ի «Զմյուռ» ենթախորագրով մի հատված էլ նվիրում է Զմյուռնիայում հրատարակվող «Ծաղիկ» տասնօրյա հանդեսին։ Անդրադառնալով «Ծաղիկում» պարբերաբար հանդես եկող «Վարաժին», «Վաղարշ» — Պողոս Պառնասյանն անում է հետևյալ կարևոր հավելումը. «Հոգիներդ կսիրեք, ըսեք ձեր մտքինը, որ հասկանանք։ Եթե ոչ՝ «Մասիսի» հետ ձախորդ վիճաբանություն մը ունեցած և տակավին փափուկ սրտերնուդ առած վերքը բուժված չէ՞։ Ո՛վ ատենոք կյուքսանպուրկի պանդուկը ճաշող և «բուն» հայեր տեսնել կարծելով «անբան» հայեր գտնող պարոն, որո սիրելի են այնչափ բանաստեղծական անուններ փոխել»²։

Արդ՝ ի՞նչն է մեզ հիմք տալիս պնդելու, որ առաջին հայացքից անհասկանալի թվացող այս պարբերության մեջ խոսքը Ստեփան Ոսկանյանի մասին է։

«Մասիսի» հետ տեղի ունեցած «ձախորդ» վիճաբանությունը, որն ակնարկել է Պ. Պառնասյանը, ծայր առավ դեռ 1859 թ. կեսերից, երբ Կարապետ Ութուշյանը, իր շաբաթաթերթի մարտի համարում, առանց դրա համար որևէ հիմնավոր պատճառաբանության, «Արևմուտք» անուն խայտառակ թերթ մը»³ արտահայտությամբ պիտակավորեց Ս. Ոսկանյանի նոր հրատարակվել սկսող փարիզյան պարբերականը։ Ս. Ոսկանյանը, իհարկե, այն մարդը չէր, որ լռելյայն անցներ այդ «գնահատականի» կողքով, և իր «Արևմուտքի» հաջորդ համարում, փոքրիկ մի պարբերությամբ և առանց անունը տալու, հիմնավորապես «մշակեց» Կ. Ութուշյանին⁴։ Պարտք չմնաց նաև Կ. Ութուշյանը։ Շուրջ երկու ամիս անց նա «Մասիսում» հրատարակեց վարկաբեկիչ մի հոդված

¹ Հանդես գալով «Մասիսում» 1863 թ., վերջինս իր հոդվածները ստորագրում էր «Վաղարշակ Պողոս Պառնասյան»։ Հետագայում այս ստորագրությունն ստացավ «Վաղարշակ Պ. Պառնասյան», «Վ. Պ. Պառնասյան» ձևը, և ապա վերջնականապես վերափոխվեց «Վաղարշ» կեղծանվան։

² «Մասիս», 1867, № 816 («Տրամախոսությունք»)։

³ «Մասիս», 1859, № 372։

⁴ Բերում ենք այդ հատվածը, որն «անհասցե» լինելու հետևանքով մշտապես վրիպել է ուսումնասիրողների աչքից. «Ջեվզեկ պրագետ մը, որուն շողոքորթ և կեղծավոր բարքը առակ եղած է Պոլիսի մեջ, և որուն ծունրը, ուղտի ծունրի պես մեծերու առջև խոնարհելն բրտացեր է, կհանդգնի, չգիտենք ինչ պատճառով ծանր բառ մը մեր հանդեսին դնմ ուղղել և իր հոդվածը

ինչպես Ս. Ոսկանյանի, այնպես էլ նրա «Արևմուտքի» դեմ՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով բացարձակապես այն ամենը, ինչն իր գիտակցական ամբողջ կյանքում արել էր «Արևմուտքին շարագիրը»⁵։ Սրան էլ հաջորդեց Ս. Ոսկանյանի «Քսանչորս ստույգությունը» հրապարակախոսական փայլուն հոդվածը⁶։ որտեղ վերջինս մեկ առ մեկ հերքում էր իր վրա բարդված բոլոր մեծ ու փոքր «ստույգությունները» և իրեն հատուկ սայրասուր երդիծանքով անխնա դիմակազերծ անում դիմացինին⁷։ Կ. Ութուշյանը դարձյալ տեղի չտվեց։ Նույն թվականի սեպտեմբերի կեսից սկսած, «Մասիսը» սկսում է հրատարակել հաշատուր «պուլետ» Միսաքյանի ընդարձակածավալ հոդվածաշարը՝ ուղղված ինչպես Ս. Ոսկանյանի, այնպես էլ նրա «Արևելք» և «Արևմուտք» պարբերականների դեմ⁸։ Դի հոդվածաշար, որի խրատուսողն ու կազմակերպողը Կ. Ութուշյանն էր։ Ավելացնենք, որ Խ. Միսաքյանի հոդվածաշարին նախորդում է Կ. Ութուշյանի դրած փոքրիկ ներածականը, որտեղ դարձյալ քարկոծվում է «Արևմուտքին զազիր շարագիրը»⁹։ Պատասխանը եղավ Ս. Ոսկանյանի հանրահռչակ «Սազ մի պուլետ» բանաստեղծությունը⁸, որը «անմահություն» ապահովեց տխրահռչակ «պուլետի» համարը⁹։ Երկու պարբերականների այս «երկխոսությունը» այլևայլ դեպքերի բերմամբ մերթ կրկին սրվելով և մերթ փոքրինչ տեղի տալով, շարունակվեց ընդհուպ մինչև 1867 թ. և հասկանալի է, ոչ հենց այդ էլ իր խոսքում ակնարկում է «Վաղարշը»։

Ինչ վերաբերում է Լյուքսեմբուրգի պանդոկում ճաշելու վերաբերյալ արվող ակնարկին, ապա դրա տակ Ս. Ոսկանյանին նկատի ունենալը ապացուցվում է հետևյալ կերպ։ օրվա հանդարտիկ պահերին Փարիզի ուսումնական նշանավոր հաստատություն՝ Սորբոնի մոտ գտնվող գեղատեսիլ ու հնամենի զբոսայգում («Լյուքսեմբուրգյան պարտեզում») էին հավաքվում թե՛ ֆրանսիացի մտավորականները՝ միմյանց հետ խոսք ու զրույցի բռնվելու, և թե՛ ֆրանսիացի ու օտարազգի ուսանողները՝ ազգի մեծերին ունկնդրելու, հնարավորության դեպքում՝ նրանց հետ ծանոթանալու միտումով։ Լյուքսեմբուրգյան պարտեզում էլ գտնվում էր ոչ պակաս հանրահայտ մի սրճարան, որտեղ սիրում էին իրենց բանավեճերը շարունակել ֆրանսիացի երևելիները, իհարկե, շրջապատված իրենց համակիր ուսանողներով։ Ինչպես ցույց են տալիս քննությունները, այդ ուսանողների թվումն էր նաև Ս. Ոսկանյանը, որն այստեղ ոչ միայն ծանոթացավ շատ նշանավոր ֆրանսիացիների հետ, այլև դարձավ նրանց ընկերն ու բարեկամը. «Նվ ինչո՞ւ երջանիկ չլիլար (Ս. Ոսկանյանը—Ս. Շ.),— այս պոթիթով գրում էր «Մասիսը»,— երբ Սորբոնի և Կոլիմ դը Ֆրանսի նման բարձրագույն դպրոցներում մեջ ուներ իբրև ուսուցիչ նախ՝

անանուն հրատարակելու Առանց առթի նախատեղ բեռնակրի սովորություն է, և շամարձակի նախատիքին ներքև իր անունը դնել, վատություն կանվանվի։

Կրնայինք ծանրագույն բառ մը ընտրել և ավելի իրավունքով, կարծենք, դիները ԽԱՅՏԱՌԱԿՆԵՆ, բայց բարեմիտ հասարակությունը մեղմե առաջ այս պարտքը կատարած է» («Արևմուտք», 1859, № 8)։ Ինչպես դժվար չէ նկատել, իր ընդգծումով, Ս. Ոսկանյանը ակնարկում է այն բառը, որը «Արևմուտքի» դեմ օգտագործվել էր Կ. Ութուշյանի «Մասիսը»։

5 «Մասիս», 1859, № 387 («Բանասիրական»)։

6 «Արևմուտք», 1859, № 17։

7 «Մասիս», 1859, № 399 («Քննաբանական»)։

8 «Արևմուտք», 1859, № 10։

9 Ս. Շտիկյան, Ոսկանյանի քաղաքական սատիրան («Բանբեր նրեանի համալսարանի», 1977, № 3)։

Վիկտոր Կուլենի և հետո Ժյուլ Սիմոնի նման մեծ իմաստասերներ, և իբրև բարեկամ՝ էդմոն Աբուլի և Լեոն Գամբետտայի պես մեծ գրագետներ ու հոնտորներ: Այս վերջիններու արժեքը ունեցող բարեկամներու հետ ԿԱՖՖ ԲՐՈՖՈՐԸ կհաճախեր, որ ժամանակին գրագետներուն և մեծագույն լրագրագետներուն ժամադրավայրն էր¹⁰: Նորանոր փաստեր, կարծում ենք, պետք չեն նկատելու համար, որ չորսսեմբուրյան պարտեզում գտնվող կաֆեում ճաշելու մասին արված ակնարկը, այս դեպքում վերաբերում է Ս. Ոսկանյանին: Ինչ վերաբերում է Բոլն հայեր» ակնարկին, ապա այն հասկանալի կդառնա, Լթե նկատենք, որ Ս. Ոսկանյանի 1853 թ. Պոլսում հրատարակված «Ներքին համագումն» խորագրով առաջին գիրքը հեղինակի փոխարեն ունևր հետևյալ նշումը. «Եվրոպա»... լրագրույն դեմ Բոլն հայու մը Ա. պատասխանը»։ Այստեղից էլ հասկանալի է դառնում, որ «Վաղարշը» դարձյալ նկատի ունի Ս. Ոսկանյանին: Եվ եթե այս բոլորին էլ ավելացնենք, որ վերջինս իր ծննդավայրի անունը գրեթե միշտ օգտագործում էր «Զմյուռ» կամ «Զմյուռին» ձևով, ընդունված «Զմյուռնիա» կամ ավելի հաճախ՝ «Իզմիրի» փոխարեն, մի բան, որը դարձյալ հիշատակված է «Վաղարշի» «Տրամախոսության» մեջ, ապա մնում է հանդել մեկ կարևոր եզրակացության, այն է՝ Զմյուռնիայի «Ծաղիկ» հանդեսում 1860-ական թվականներին հոգվածներով հանդես եկող «Վարաժ» կեղծանունով հրապարակախոսը Ս. Ոսկանյանն է:

ԶԱՆԻԿ ԱՐԱՄՅԱՆԻ ԳԻՐՔԸ.— 1861 թ. Փարիզում, Ճանիկ Արամյանի ապարանում հրատարակվում է «Խնդիր միության հայոց» խորագրով 46 էջանոց մի գրքուկ: Գրքուկի հեղինակն անդրադառնում է հայ ժողովրդի ազգային միասնության հարցերին, վճռականորեն պահանջում է չլիթել «ազգություն» և «կրոն» հասկացությունները և կոնկրետ միջոցներ է առաջարկում ազգային անմիաբանությանը ըստ հնարավորին շուտ վերջ տալու համար¹¹: Հազիվ մի տարի անց, 1862 թ. հունվարից, «Կոնստանդնուպոլսի» ամսագիրը սկսում է արտատպել այն, և ավարտում է հաջորդ տարվա փետրվարյան համարում: Մեղ համար ուշագրավն այն է, որ «Խնդիր միության հայոց» գրքուկն ունի առաջին հայացքից շատ տարօրինակ «Հայասեր գաղղիացի D. S. A. de N***» ստորագրությունը և ըստ այդմ՝ մշտապես թվացել է, թե նրա հեղինակը ֆրանսիացի է: Այդ շփոթությանը տուրք է տվել նաև Հարություն Սըվաճյանի «Մեղուն», որը գրքուկի հրատարակության առիթով գրել է. «Ինչպես կերևնա դիրքին ծայրը դրված ստորագրությունն, հայագետ ֆրանսիացի մը, վերոհիշյալ անունով տետրակ մը կհրատարակե հայոց համար, հորդորելով անոնք, որ ալ խելքերնին գլուխնին ժողովելով, կրոնական հինցած վեճերը մեկդի դնելով, աշխատին միանալու»¹²:

Արդ՝ ո՞վ է թաքնված «Հայասեր գաղղիացի D. S. A. de N***» կեղծանվան ներքո: Հարցը պարզելուն օգնեց ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվում (ՊԿՊԱ) գտնվող 1862 թ. «Մտից մատենանը»: Այստեղ էջմիածնի մատենադարանին նվեր ուղարկված գրքերի թվում հիշատակված է նաև վերոհիշյալ «Խնդիր միության հայոցը», որ ուղարկված էր Փարիզից:

¹⁰ «Մասիս», 1901, № 26 («Ատեփան Ոսկանի կյանքեն»): «Հայաստանի կոչնակ», 1948, № 1 («Վյուքսեմբուրգի ծառաստանը»):

¹¹ Գրքուկն ունի «Երկրորդ տիպ» նշումը: Առաջին հրատարակության վերաբերյալ մասնաժամանություններ չկարողացանք գտնել:

¹² «Մեղուն», 1861, № 146:

«Ի հեղինակէ»¹³։ Պարզ էր, որ անհայտ հեղինակը նվիրատվության սովորական ընծայականից հետո պետք է օգտագործած լիներ իր իսկական անուն-ազգանունը։ Ուստի, անհրաժեշտ էր գտնել «Խնդիր միության հայոցի» հենց այդ օրինակը։ Բարեբախտաբար, այն հնարավոր եղավ գտնել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 2059 (II օր.) թվահամարի տակ և այստեղ էլ, հենց առաջին էջի վրա, կարդում ենք հետևյալ մակագրությունը. «Վասն գրատան Ս. էջմիածնի, նվեր հեղինակեն, այսինքն՝ Ճ[անիկ] Արամյանն»։ Դժվար չէ նկատել, որ այս մակագրությունն անվերապահորեն լուծում է «Խնդիր միության հայոց» գրքույկի հեղինակային պատկանելության հարցը։ Այս ճշգրտումը է՛լ ավելի հավաստելուն օգնում է հետևյալ լրացուցիչ փաստը։

1863 թ. դեկտեմբերից «Մասիսը» սկսում է հրատարակել «Առաջարկություն առ ամենապատիվ սրբազան պատրիարք հայր և առ անդամս կեդրոնական վարչության» խորագրով մի հոդվածաշար, որը շարունակվում է շուրջ երկու ամիս, և որը ունի մեզ համար կարևոր «Ճանիկ Ս. Արամյան» ստորագրությունը։ Հոդվածից հետո տրված է հետևյալ ծանուցումը. «Ահա լմնցավ ազգային եկամտի մը հայթհայթման նկատմամբ մեր մեծարգո բարեկամին առաջարկությունը։ Ինչպես կտեսնվի, առաջարկողն ասկե առաջ Փարիզ տպված «Խնդիր միության հայոց» մակագրով ուշադրության արժանի տեստրակին հեղինակն է, և եթե այն պատվական տետրակը, դժբախտաբար, խոհական գլուխներու առժամանակյա զբաղմունք մ'ըլլալի ավելի արդյունք մը չունենցավ...»¹⁴։

Ինչպես տեսնում ենք, կրկին հավաստվում է, որ «Խնդիր միության հայոց» գրքույկի հեղինակն իրոք Ճանիկ Արամյանն է։ Հետևաբար, «Հայասեր գաղղիացի D. S. A. de N...» ստորագրությունը պետք է վերծանել՝ Ճանիկ (Ֆրանսերեն՝ Djanik) Ս. Արամյան դե Նիկոմեդիա (իմա՝ Նիկոմեդիացի) ձևով, իսկ «Հայասեր գաղղիացի» արտահայտությունը՝ սոսկ անհրաժեշտ վերադիր, հեղինակի ով լինելը ավելի լավ բողարկելու համար։

ԻԶՄԻՐԱՆԶԱՅ ՄԻ ՔԱՆԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Նկատի ունենք Զմյուռնիայի անդրանիկ պարբերականի՝ «Արշալույս արարատյանի» սկզբնական ժամանակաշրջանի համարներում հրատարակված գործերը, որոնք, որպես կանոն, ստորագրվում էին երկու, երեք, չորս, և նույնիսկ հինգ զխատառերով։ Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս երևույթն օրինաչափ էր այն պատճառով, որ իզմիրահայ մեր մտավորականներն էլ, հետևելով Եվրոպայում և մասնավորապես Ֆրանսիայում լայնորեն տարածված սովորույթին, հասարակական կյանքում որոշ դիրքի ու ճանաչման հասնելուց հետո, իրենց իսկական անվան առջևից ավելացնում էին նաև երկրորդ՝ «հարգական» անուն և ստացվում էր երկու անուն ու ազգանուն, իսկ ավելի հաճախ՝ երկու անուն, հայրանուն ու ազգանուն։ Բնականաբար, «Արշալույս արարատյանում» հանդես գալու դեպքում անհրաժեշտ էր լինում ստորագրել կամ երկու անուն և ազգանվան երեք տառերով, կամ էլ՝ երկու անուն, հայրանուն և ազգանվան դեպքում, չորս տառերով։ Եվ եթե ավելացնենք, որ ամենևին էլ հազվագյուտ չէին դեպքերը, երբ հիշյալ չորս զխատառերի կողքին ավելացվում էր նաև հինգերորդը, այսինքն՝ տվյալ անձնավորություն

¹³ ՀՄՍՀ ՊԿՊԱ, Կաթողիկոսական դիվան («Մտից մատենան 1862 ամի», էջ 91)։

¹⁴ «Մասիս», 1864, № 264։

ծննդավայրի կամ պատմական տեղավայրի անվան առաջին տառը, ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն: «Արշալույս արարատյանի» էջերի այդ ստորագրությունների բացահայտելը օգնում է ավելի մոտիկից նանաչելու իդմիրահայ մտավորականությանը և, միաժամանակ, պարզելու, թե թղթակիցների ինչպիսի կազմով էր համալրված Ղուկաս Պալղաղարյանի պարբերականը:

Երկշաբաթեթերթի առաջին իսկ համարից սկսած, տպագրվում են աղյային-հրապարակախոսական բնույթի հոդվածներ՝ «Ղ. Գ. Պ.» ստորագրությամբ, որը խմբագիրն է՝ Ղուկաս Գասպարի Պալղաղարյանը: Մի տարի անց, 1841 թ.՝ «Պ. Պ.», ապա՝ «Պ. Գ. Պ.» ստորագրությամբ սկսում է հանդես գալ խմբագրի ավագ եղբայրը՝ Պաղտասար Գասպարի Պալղաղարյանը: Սկզբնական շրջանում «Յ. Շ.», ապա՝ «Յ. Շ. Վ.», որից հետո արդեն հաստատուն դարձած «Յ. Շ. Վ. Ս.» ձևով, 1843 թ. վերջերից, ամենազանազան բնույթի դեղարվեստական ստեղծագործություններով ու հոդվածներով հանդես է գալիս Մեսրոպյան վարժարանի հայկաբանության ուսուցիչ՝ Հովհաննես (Յովհաննէս) Շահինյան Վանեցի Մարմետցին: Մոտավորապես նույն թվականից «Տ. Ս.», ապա՝ «Հ. Ս. Ս.», իսկ հետագայում և վերջնականապես՝ «Տ. Հ. Թ. Ս.» ստորագրությամբ, ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական բանաստեղծություններով ու հոդվածներով հանդես էր գալիս Տիգրան Սավալանյանը (ապա՝ Հայրապետ Տիգրան Սավալանյան, որից հետո՝ Տիգրան Հայրապետ Թումա Սավալանյան): Ուշագրավ է իդմիրահայ մտավորականներ Կոստանդյանների պատմությունը: «Արշալույս արարատյանի» էջերում, 1841 թ. սկսած, «Գ. Կ.» ստորագրությամբ հանդես էր գալիս Գրիգոր Կոստանդյանը: 1850-ական թվականներից երկշաբաթեթերթի էջերում սկսում է տպագրվել նաև որդին՝ Գալուստ Գրիգորի Կոստանդյանը, հասկանալի է՝ «Գ. Գ. Կ.» ստորագրությամբ: 1860-ական թվականներից, երբ վերջինս արդեն որոշ դիրք ու անուն ուներ Զմյուռնիայում և, մանավանդ, երբ արդեն ընտրվել էր Ֆրանսիայի ասիական ընկերության պատվավոր անդամ (1861 թ. հուլիսի 15)¹⁵ իր անվան սկզբից ավելացրեց նաև «Արամ» հարգական անունը, սկսեց կոչվել Արամ-Գալուստ Գրիգորի Կոստանդյան և իր հոդվածներն էլ ստորագրում էր «Ա. Գ. Գ. Կ.» ձևով: «Ս. Գ. Կ.» ստորագրությամբ «Արշալույս արարատյանում» հաճախակի հանդես էր գալիս Գալուստ Կոստանդյանի ավագ եղբայրը՝ Սարգիս Գրիգորի Կոստանդյանը, իսկ «Պ. Կ.», ավելի հաճախ՝ «Պ. Գ. Կ.» ստորագրությամբ՝ բժշկական-առողջապահական բնույթի հոդվածներով՝ Գալուստ Կոստանդյանի կրտսեր եղբայրը, մասնագիտությամբ բժիշկ, Պողոս Գրիգորի Կոստանդյանը: «Յ. Տ.», ապա՝ «Տ. Յ. Տ.» և վերջնականապես՝ «Տ. Յ. Յ. Տ.» ձևով, 1846 թ. սկսած, «Արշալույս արարատյանում» հանդես էր գալիս Տիգրան-Հարություն (Յարութիւն) Հովհաննեսի (Յովհաննէսի) Տետեյանը՝ հետագայում կրթական-մշակութային հանրահայտ գործիչ Հարություն Տետեյանը, իսկ երկու տարի հետո, 1848 թ.՝ «Կ. Յ. Տ.», «Ա. Կ. Տ.», «Ա. Կ. Տետե.», ապա ավելի հաճախ՝ «Ա. Կ. Յ. Տ.» ստորագրություններով՝ եղբայրը՝ Արամ-Կարապետ Հովհաննեսի (Յովհաննէսի) Տետեյանը՝ հետագայում ոչ պակաս նշանավոր գործիչ Կարապետ Տետեյանը: Քիչ ավելի ուշ, 1852 թ. սկզբներից, երկշաբաթեթերթի էջերում, «Հ. Յ. Տ.» ապա՝ «Հ. Յ. Յ. Տ.» ստո-

¹⁵ «Փարիզ», 1861, № 50 («Խառն լուրեր»):

րագրություններով սկսում է հանդես գալ Տետեյանների երրորդ եղբայրը՝ Հայկ-Հակոբ (Յակոբ) Հովհաննեսի (Յովհաննէսի) Տետեյանը, որին հետագայում (Հակոբ Տետեյան անուն-ազգանունով) վիճակված էր բավականին նշանակալից հետք թողնել հայկական մշակույթի անդաստանում: 1848 թ. սկզբներից «Ա. Ս. Պ.» և «Ա. Ս. Յ. Պ.» ստորագրություններով «Արշալույս արարատյանի» էջերում, իսկ ապա նաև «Մասիսում» գեղարվեստական բնույթի շափածո ու արձակ ստեղծագործություններով հանդես էր գալիս Արմենակ-Սարգիս Հովհաննեսի (Յովհաննէսի) Պալապանյանը:

Ստորագրության կիրառությունը «հակառակ» հաջորդականությամբ ընթացավ Ստեփան Ոսկանյանի մոտ: Սկզբում (1843 թ.) նա ստորագրում էր լրիվ ձևով: Հետագայում (1844 թ.) այդ ստորագրությունը դարձավ «Ս. Ոսկանյան», ապա՝ «Հայկ Ս. Ոսկանյան»: 1845 թ. երկշաբաթաթերթի էջերում երևում է «Հ. Ս. Ո.» կամ նույնիսկ «Հ. Ս.» ձևը և այդպես մինչև 1846 թ. սկիզբը, մինչև նրա Փարիզ մեկնելը:

«Արշալույս արարատյանում» ավելի կամ պակաս հաճախակիությամբ հանդես եկողներից էին նաև «Յ. Պ.»-ն (Հովհաննես (Յովհաննէս) Պրուսացի, իմա՝ Չամուռճյան), որն սկսում է տպագրվել 1846 թ. սկզբներից: 1847 թ. փետրվարից «Յ. Ո.» և «Ա. Յ. Ո.» ստորագրություններով իր գեղարվեստական գործերն է հրատարակել Աշոտ-Հակոբ (Յակոբ) Ոսկանյանը՝ ականավոր հրապարակախոս և հասարակական գործիչ Ստեփան Ոսկանյանի եղբայրը: «Ռ. Ա. Փափ.» ստորագրությամբ մանկավարժական ու հասարակական բնույթի հոդվածներով սկզբնական շրջանում հանդես եկող Մեսրոպյան վարժարանի տեսուչ Ռուբեն Անդրեաս Փափաղյանը 1849 թ. կեսերից վերջնականապես ստորագրում է «Ռ. Ա. Փ.»: «Ս. Պ. Փ.» և «Ս. Պ. Պ. Փ.» ձևով էր ստորագրում իր շափածո և արձակ գործերը Ստեփան-Պերճ Պողոսի Փափաղյանը, «Յ. Գ. Տ.» ձևով՝ Հարություն (Յարութիւն) Գարեգին Տալանյանը, «Ա. Ա. Ս.» ձևով՝ Արիստակես Արշարունի Սեդրակյանը՝ հետագայի նշանավոր բանահավաք-ազգագրագետը, «Մ. Մ. Ա.» ձևով՝ Մատթեոս Մկրտի Այվառյանը և վերջապես՝ «Գ. Տ. Ա.» ձևով «Արշալույս արարատյանում» իր գործերն էր հրատարակում բանահավաք-բանասեր Գևորգ Տեր-Ալեքսանդրյանցը:

ԾԵՐԵՆՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՍԿԻՋՔԸ.— 1853 թ. սկզբին, «Արշալույս արարատյանը» հրատարակել է «Առ վ[երապատվելի] հ[այր] Ղևոնդ վարդապետ Հովնանյանց» խորագրով ուշագրավ մի հոդված, որն ունի «Խ. Ծ.*.*» ստորագրությունը: Հոդվածին նախորդում է շաբաթաթերթի խմբագրության հետևյալ ծանոթագրությունը. «Ասկե երկու տարի առաջ, համին 1850 թ. նոյեմբեր ամսույն մեջ, ընդարձակ հոդված մը ընկտլաք ի Փարիզեն, դոր մեր արժանահարգ գիտնական բարեկամներեն մեկը, հռովմեական համազգի եղբայր մը ուղարկած էր մեզ ի հրատարակություն: Այն ժամանակը զանազան ազգօգուտ նկատմունքներե շարժյալ՝ շուգնցինք ի լույս ընծայել հիշյալ հոդվածը... սակայն պարագաները փոխվեցան և այս հոդվածը այսօրվան օրս խիստ օգտակար կրնա ըլլալ»¹⁶, Հոդվածի հեղինակը բավականին զգաստ տրամաբանությամբ քննում է կաթոլիկ-լուսավորչական դավանաբանական պառակտումը ծնող սոցիալ-պատմական պատճառները և

¹⁶ «Արշալույս արարատյան», 1853, № 433 («Հավելված»):

այն վերացնելու համար նշում է հետևյալ եղանակները: «Նախ ազգին մեծ մասը պղտիկ մասին հետևեցնել, այսինքն՝ բոլոր հայ ազգը պապական ընել:

Իրկորոգ. աղգին պղտիկ մասը մեծ մասին հետևեցնել, այսինքն՝ բոլոր հայ աղգը էջմիածնա կաթողիկոսին հնազանդեցնել:

Աղգին մեծ մասը պղտիկին հետևեցնելու համար ես անկարելիություն մը կտեսնեմ. վասն զի յուր մեծությունը մյուս մասին պղտիկության հետ բաղդադելով կտեսնենք, որ դարձյալ ինքնին ազգ մը կրնա ձևացնել, երբ պղտիկ մասը աննշան և անանուն ժողովուրդ մը կրնա մնալ... ուստի ճշմարիտը՝ աղգին պղտիկ մի մասը մեծ մասին հետևեցնել է, այսինքն՝ բոլոր հայ ազգը էջմիածնա կաթողիկոսին հնազանդեցնել»:

Այս հոդվածից շուրջ քսան տարի անց, Հարություն Սըվաճյանի «Մեղու» հանդեսը, իր 1871 թ. համարում, հրատարակում է նրա մի ծավալուն հոդվածը՝ «Քրիստոսի եկեղեցիին բաժանումը և պապականությունը, դոկտոր Շիշմանյան և տեր Խորեն եպիսկոպոս» խորագրով, որտեղ, ի թիվս այլոց, դարձյալ քննվում են կրոնական երկպիեղկվածության հետ կապվող հարցեր: Այստեղ էլ ահա ուշագրավ է հետևյալ հատվածը. «Դոկտոր Շիշմանյան 1850-ին ծանոթացավ ազգին. իր մեկ հոդվածովը ԱՐՇԱՆՈՒՅՍ լրագրույն մեջ (իմա. «Արշալույս արարատյան»—Ս. Շ.), ուր սաստիկ կշտամբելով Վիեննայի Մխիթարյան միաբանությանը... կըսեր, թե ո՞րն է խելքի մոտը և կարելին. մե՞ծ մասը փոքրագույն մասին տանելով միությունը կազմել, թե փոքրագույն մասը մեծ մասին տանել կապելով. և կը ցուցնեի ու կը հաստատեր, թե ազգային միության ամենայն սրտով և անկեղծությամբ փափագողը պետք է, որ կաթողիկոսները տանի լուսավորչականներուն միացնեն»¹⁷:

Ինչպես դժվար չէ նկատել, Հ. Սըվաճյանը գրեթե բառացի վերարտադրում է «Արշալույս արարատյանում» տպագրված հոդվածի՝ թե՛ այն հատվածը, որը բերվել է վերևում, իսկ սա նշանակում է, որ նա ծանոթ է եղել ամբողջ հոդվածին, և թե՛ հավաստում է այն փաստը, որ վերջինս դրվել է 1850 թ.: Տվյալ դեպքում կարևորը, սակայն, այն հավաստումն է, որ հոդվածի հեղինակը «դոկտոր Շիշմանյանն է», այսինքն՝ Մերենցը, երբ, ինչպես ասացինք, հոդվածն ունի «Խ. Մ.» ստորագրությունը: Ենթադրել, որ Հ. Սըվաճյանը ասելով է՝ այն Սըվաճյանը, որն անձամբ ծանոթ էր Մերենցին, մոտ շորս տարի շարունակ Փարիզում նրա մտերիմն էր, հետագայում էլ այլևայլ առիթներով մեկից ավելի անգամներ արտահայտվել է նրա մասին, միշտ հրատարակելով կենսագրական-անձնական բնույթի հետաքրքրական փաստեր, — անմտություն կլինի: Մնում է որոշակիորեն զալ հետևյալ եզրակացության. «Արշալույս արարատյանի» էջերում «Խ. Մ.» ստորագրությունն ունեցող

17 Հ. Սըվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 445:

18 Մեր խնդրից դուրս է քննել Մերենցի հոդվածի հասարակական արձագանքները: Նշենք միայն, որ բավական ժխտողական պատասխանով հանդես եկավ Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը (1853, № 22), սրան էլ հաջորդեց «Մասիսում» (1853, № 19) հրատարակված Գրիգոր Խաչատուրի Կարապետյանի պատասխան հոդվածը՝ ի պաշտպանություն «Արշալույս արարատյանի» ու Մերենցի, որը նույնությամբ արտատպեց «Արշալույս արարատյանը» (1853, № 434): Այս բոլորին ի պատասխան կրկին հանդես եկավ «Եվրոպան» (1853, № 26), և կրկին պաշտպանեց իր նախկին տեսակետը: Մասամբ՝ ի հեճուկ հակառակորդների, իսկ հիմնականում համարելով եղածների մեջ ամենալավը, «Արշալույս արարատյանը» նույնությամբ վերատպեց Մերենցի հոդվածը (1853, № 444), ավելի սուր ու շեշտակի առաջադրանքով հանդերձ և այլն:

«Առ վերապատվելի հայր] Ղևոնդ վարդապետ Հովնանյանց» խորագրով հախուռն ու շեշտակի հոդվածի հեղինակը Մերենցն է: Իսկ քանի որ հոդվածը գրվել է «1850 թ. նոյեմբեր ամսույն մեջ», որը Հ. Սրվաճյանը համարում է Մերենցի «հրապարակ իջնելուն ատենը», մի րան, որ նա նույն այդ հոդվածում հավաստում է մի քանի անգամ, ուրեմն այդ թվականն էլ պետք է համարել Հովսեփ Շիշմանյան-Մերենցի դրական-հրապարակախոսական գործունեության սկիզբը:

ФИЛОЛОГИЧЕСКИЕ УТОЧНЕНИЯ

СУРЕН ШТИКЯН

Резюме

Сохранившиеся материалы позволяют раскрыть новый псевдоним известного армянского публициста Степана Восканяна «Вараж», под которым он печатался на страницах измирского еженедельника «Цагик». Сопоставление фактического материала дает возможность уточнить, что инициалы «D. S. A. de. N***» принадлежат не кому-либо из французских ученых, как ошибочно считалось по сей день, а армянскому общественному деятелю Джанику Арамяну, а также установить авторскую принадлежность почти 30-ти подписей в газете «Аршалуйс Араратян», состоящих из трех букв.

Из материалов периодической печати следует также, что начало публицистической деятельности Церенца (Овсепа Шишманяна) относится к концу 1850 г.